730 Ողորմիր ինձ, ով Աստված,

1. Ողորմիր ինձ, ով Աստված,
Քո առատ ողորմության համեմատ,
Մեղքերս ներիր ու սրբիր ինձ, ով իմ Տեր,
Քանզի ես կճանաչեմ իմ հանցանքները
Ու առջևս են միշտ իմ մեղքերը:
Կանչում եմ Քեզ, ով Աստված,
Քանզի ես կճանաչեմ իմ հանցանքները
Ու առջևս են միշտ իմ մեղքերը,
Օգնիր, Տեր:

Իմ ապավեն, ալելուիա՛,
Ասպար ու վեմ, ալելուիա՛,
Իմ փրկության Աստված, ալելուիա՛,
Մենք Քեզ ենք ով Տեր միշտ հուսացած, ալելուիա՛:

2. Խնդրում եմ Քեզ, ով Աստված
Իմ ներսում ուղիղ հոգի նորոգիր,
Երեսիդ առջևից մի՛ ձգիր ինձ, ով Տեր,
Սուրբ Հոգիդ թող ինձանից չհեռանա
Ու անձս երբեք Քեզ չմոռանա:
Խնդրում եմ Քեզ, ով Աստված,
Սուրբ Հոգիդ թող ինձանից չհեռանա,
Ու անձս երբեք Քեզ չմոռանա,
Օգնիր, Տեր: